

ՀԵՐԹԱԿԱՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԵՆԹԱԿԱ



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ԴԱՍԸՆԹԱՑ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր՝ կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուկյան Օսան

Ուսումնական հաստատություն՝ հ.179 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն-----

Ներածություն

Գլուխ 1. Բնապահպանական հիմնախնդիրների մասին

**Գլուխ 2. Էկոլոգիական կրթության եվ դաստիարակության
զարգացման ռազմավարությունը**

**ԳԼՈՒԽ 3. Հայաստանի Հանրապետության
բնապահպանական խնդիրները**

Գլուխ 4 Սևանա լիճ՝ հայկական մարգարիտը

Գլուխ 5 Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա

Եզրակացություն-----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մարդկության ամենամեծ տնտեսական սպառնալիքը բնությունն արժևորելու մեր անկարողությունն է:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել բնապահպանական խնդիրները, որոնք առկա են շրջակա միջավայրում: Կրթական համակարգում բացահայտել այն ուղիները, միջոցներն ու հնարները, որոնք աշակերտների գիտակցությանը կհասցնեն շրջակա միջավայրի կարևորությունը, նրանց դերակատարումը այդ միջավայրի պահպանության գործում: Այս գիտելիքները հարստացնելու, ամրակայելու համար անհրաժեշտ է նաև իրագործել նախագծային աշխարհում՝ լիովին բավարարելու նյութի ուսումնասիրության վերաբերյալ արդի կրթական պահանջները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշման, 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման պահանջներից ելնելով մշակել է էկոլոգիական կրթության եվ դաստիարակության ռազմավարություն: Աշխատանքում անդրադարձ ենք կատարել էկոլոգիական կրթության եվ դաստիարակության զարգացման ռազմավարությանը, որն իրենից ենթադրում է անդրադարձ կատարել շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքին, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրներին՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալուման հետևանքներին, էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակին կամ բացակայությանը: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության: Էկոլոգիական կրթության և դաստիարակության ռազմավարության մշակումը էական նշանակություն ունի հայ հասարակության համար, քանզի Հայաստանը նույնպես ունի իր տեղն ու դիրքը երկիր մոլորակում:

Անդրադարձ ենք կատարել Հայաստանի Հանրապետության բնապահպանական ինդիքն

Գլուխ 1.

Բնապահպանական հիմնախնդիրների մասին

Այսօր մենք ապրում ենք «փոքր տիեզերքի մեծ մոլորակում», որտեղ տնտեսությունը բացառիկ ճնշում է գործադրում Երկիր մոլորակի վրա. չկա ազատ ոչ մի բնական ռեսուրս: Ամենը՝ ներառյալ կենսաբազմազանությունը, քաղցրահամ ջրերը, մթնոլորտը, օվկիանոսները, անտառները, սառցե ժայռերը և այլն, անմիջական դեր ունեն Երկիր մոլորակի և, հետևաբար, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործում: Մտահոգությունն այն է, որ ներկայիս տնտեսական համակարգը մշակվել է Ա. Սմիթից մինչև Ջ. Քեյնսի ժամանակաշրջանում, երբ մենք «փոքր մոլորակ էինք, մեծ տիեզերքի մեջ», երբ համաշխարհային տնտեսության՝ մոլորակի վրա ազդելու գաղափարը ծիծաղելի էր: Այն ժամանակ կարող էինք աղտոտել մթնոլորտը, դատարկել օվկիանոսները և այլն, պատկերացում չուներնալով, որ Երկիր մոլորակը դրան ի պատասխան կարող է չափազանց դաժան գտնվել:

Բայց այսօր ամեն բան այլ է: Մարդկանց կողմից բնության անխնա և անխիղճ օգտագործման առաջին պատասխան ազդակները նկատվել են դեռևս 1980-ական թթ.-ին (օզոնի շերտի բարակում, ջերմային ալիքների տեղաշարժ, փոթորիկների ակտիվացում, սառույցների հալման արագացում, քաղցրահամ ջրերի պակաս և այլն): Ներկայումս տնտեսական աճն ուղեկցվում է սահմանափակ բնական ռեսուրսների անխնա օգտագործմամբ, և որպես արդյունք՝ բնական աղետի ռիսկի աճով: Տնտեսագետներն իրականում ի վիճակի չեն ճիշտ գնահատել բնությանը հասցված վնասները: Ուստի բնությունը արժևորելու համար մենք պետք է փոքր-ինչ հեռանանք տնտեսագիտությունից:

Շատ հին հավատք կա, որ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները հնարավոր է լուծել նախապես անհրաժեշտ տնտեսական միջոցներ կուտակելուց հետո միայն: Այսինքն՝ բավարար ֆինանսական միջոցների առկայության դեպքում միայն մենք կարող ենք մեզ թույլ տալ փրկել բնությունը: Այսպիսի մտածելակերպը երբեք ճիշտ չի եղել և այն պետք է ընդմիջտ մերժվի, եթե մեզ լրջորեն հետաքրքրում է Երկիր մոլորակի վրա բարգավաճող մարդկությունն ունենալու նախապայմանով տնտեսական զարգացումը: Ճշմարտությունն այն է, որ հասարակությունը շնորհակալ պետք է լինի բնությանը, որ դեռևս չկան շատ վտանգավոր կլիմայական փոփոխություններ: Ընդ որում՝ աղքատ երկրներում ապրող հասարակությունը պատասխանատվություն է կրում ավելի քիչ արտանետումների համար: Սակայն ինչպես հայտնի է, տնտեսական աճից ամենաքիչն օգտվում են աղքատ երկրները: Անարդարությունը սրվում է, երբ հարստության կուտակման գործընթացը տեղի է ունենում հարուստ երկրների կողմից բնությունից անխնա «սուբսիդավորման» շնորհիվ, իսկ այդպիսի «սուբսիդիաների» համար վճարում են ուրիշները՝ հատկապես ամենաաղքատ երկրները:

Ձեռնարկատիրական գործունեության խթանման և արտադրողականության աճի համար ազատ շուկայական տնտեսությունը պետք է գործի կայուն տնտեսական համակարգում: Բայց գլոբալ ռիսկերը չափազանց բարձր են, այդ կայունությունն ապահովելու համար: Ավելին՝ համաշխարհային կայուն զարգացմանն անցնելու առավելությունները շատ հաճախ անտեսվում են գրեթե բոլոր պետությունների

կողմից: Բայց հաջողության հասնելու համար պետք է սահմանել տնտեսության զարգացման որոշակի սահմանափակումներ. համաշխարհային տնտեսության կայուն զարգացումը դիտարկելով սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման համատեքստում: Սա տնտեսական աճը խոչընդոտող պայման չէ, այլ ավելի նորարարական, «առողջ», բարգավաճող տնտեսություն ունենալու նախապայման: Անկայուն կլիմայական պայմանները, եղանակային էքստրեմալ դրսևորումները, ապագայում ջրի սակավության հիմնախնդիրները Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից դիտարկվում են բիզնեսի համար առաջնային ռիսկերի ցանկում: Հետևաբար՝ և՛ կառավարության, և՛ բիզնեսի առջև դժվարին խնդիր է դրվում տնտեսական աճը հավասարակշռել էկոլոգիական կայուն զարգացման հետ: Յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ հնարավոր չէ մարդկության համար կառուցել կայուն, բարգավաճող և արդար ապագա քանդված և ավերված մոլորակի վրա, հատկապես երբ կանխատեսվում է, որ առաջիկա երեք տասնամյակների ընթացքում երկրի բնակչությունը հասնելու է 10 միլիարդի:

Տնտեսական առումով ՀՀ-ի բնաշխարհը և բնական պաշարները՝ ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական, կենդանական և այլն, նրա ժողովրդի հարստությունն ու սեփականությունն են, ընդ որում՝ ոչ միայն ներկայիս ՀՀ քաղաքացիների, այլև նրանց սերունդների, որոնք հնարավոր է՝ նոր մտեցումներ որդեգրեն իրենց սեփականությունը տնօրինելու հարցում: Ուստի բնությանը և բնական պաշարներին վերաբերող յուրաքանչյուր հարցում անհրաժեշտ է ելնել այն կանխավարկածից, որ «շրջակա միջավայրը մենք ոչ թե նվեր ենք ստացել մեր ծնողներից, այլ պարտքով վերցրել ենք մեր զավակներից»: Ուստի բնական պաշարների օգտագործման հարցում հարկավոր է առաջնորդվել գալիք սերունդներին պատկանող սեփականությունը չյուրացնելու, այն օգտագործումից նրանց համար ապագայի լավ պայմաններ ստեղծելու սկզբունքներով:

Գլուխ 2.

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության:

2. 2002 թվականին Յոհանեսբուրգում կայացած «Ռիո+10» և 2012 թվականին Ռիո-Դե Ժանեյրոյում կայացած «Ռիո+20» կայուն զարգացման գագաթնաժողովների եզրափակիչ փաստաթղթերը և 2015 թվականի ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի 70-րդ նստաշրջանի կողմից ընդունված բանաձևը՝ «Վերափոխենք մեր աշխարհը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագիրը, հատուկ նշանակություն են տալիս էկոլոգիական կրթության (այսուհետ՝ ԷԿ) որակի բարձրացմանը:

3. ԷԿ-ն անհատի կրթության, դաստիարակության և զարգացման անընդմեջ, բազմակողմանի և պարտադիր իրականացվող գործընթաց է՝ նպատակաուղղված շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, ինչպես նաև արժեքային համակարգի և վարքագծի կողմնորոշմանն ու էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

4. ԷԿ-ն տեսական գիտելիքից ու գիտագործնական ունակություններից գատ, նախ և առաջ, մոտեցում է, փիլիսոփայություն և գործիք՝ մարդու և բնության միջև կապը ընկալելու, հասկանալու, մեկնաբանելու և այդ ամենի հիման վրա շրջակա միջավայրի հանդեպ առանձին անհատների, մարդկանց խմբերի և ողջ հասարակության վարքագծի նոր մոդելներ մշակելու առումով:

5. Էկոլոգիական մշակույթը շրջակա միջավայրի հետ մարդկության կենսագործունեության ժառանգած փորձն է, որը նպաստում է առողջ կենսակերպին, երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, կյանքի որակի բարելավմանը և էկոլոգիական անվտանգությանը: Հասարակության էկոլոգիական մշակույթի ձևավորումը պետության գերակա ուղղություններից է:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ, վավերացրել է մի շարք միջազգային բնապահպանական համաձայնագրեր (կոնվենցիաներ և դրանց արձանագրություններ), որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներում մեծ նշանակություն է տրվում ԷԿ-ին և դաստիարակությանը:

7. Անընդմեջ էկոլոգիական և կայուն զարգացման կրթությունը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի անբաժանելի մասն է: Համաձայն «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը պարտադիր է կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

8. Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է երկրում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական վիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի անհամապատասխանություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի միջև, որի պատճառներից մեկը հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի խիստ ցածր մակարդակն է:

9. Հայաստանի Հանրապետությունում արդի կրթական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է կարևորել ԷԿ և դաստիարակության ռազմավարական նշանակությունը՝ բնակչության էկոլոգիական անվտանգության և անվտանգ տնտեսության զարգացման խնդրում, որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչի ապահովում՝ մարդու և բնության փոխհարաբերություններում:

10. Ռազմավարության մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ս որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման պահանջներից:

11. Ռազմավարությունում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական կրթության և դաստիարակության առկա վիճակը, Ռազմավարության նպատակը և խնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ քաղաքականության մշակման հիմնավորվածությունը, առաջարկվող հիմնական ուղղությունները, նախատեսվող գործողությունները և ակնկալվող արդյունքները:

ԳԼՈՒԽ 3.

Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրները

Այո, դեռևս գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ, բայց կան նաև մի խումբ մարդիկ, բնապահպաններ, գործի նվիրյալներ, ովքեր փորձում են պաշտպանել ոչ միայն իրենց իրավունքները իրենց իսկ հայրենիքում մաքուր ջրի, օդի, բնության հասանելիություն ունենալու համար, այլ նաև այն սերունդների, որոնք գալու են մեզնից հետո: Հասարակական կազմակերպություններից Հայկական Բնապահպանական ճակատը հստակ գործունեություն է ծավալում նաև հանքարդյունաբերության շահագործման դեմ:

Հայաստանի նման փոքր երկրում դժվար է ենթադրել, որ հնարավոր են շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ խնդիրներ, սակայն, փաստացի երկրի ընդերքը հարուստ է երկաթով, պղինձով, մոլիբդենով, ցինկով, ոսկով և այլ մետաղներով ու հետևաբար, հանքարդյունաբերողների կողմից շրջակա միջավայրի աղտոտումը բավական արդիական խնդիր է դարձել: Բացի այս հիմնական մետաղներից, այլ մետաղների շարքին են դասվում ռենիումը, սելենիումը, կադմիումը, ինդիումը, բիսմութը: Ներկայումս շահագործման մեջ են գտնվում մոտ 400 հանքեր, ու հարկ է նշել, որ այն կազմում է ՀՀ արդյունաբերության հիմնական մասը և ընդհանուր արտահանման ծավալների կեսը: Հաճախ այս հանքերի սեփականատերերը անհայտ են, քանի որ օՖշորում մի շարք ընկերություններ կան գրանցված: Սակայն պարզ է, որ ՀՀ հիմնականում նախկին կառավարության քաղաքական վերնախավի անդամները մասնաբաժիններ ունեն այդ ընկերություններում: Որոշ ընկերություններ, որոնք գործում են Հայաստանի տարածքում, պաշտոնապես գրանցված են Եվրամիության տարածքում: Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարությունը երկակի իմաստ ունեցող օրենքների միջոցով ու հանքարդյունաբերության ոլորտի համար նախատեսված ցածր հարկերով, կարելի ասել, խթանել է հանքերի շահագործումը: Օրենքների երկակի բնույթը բնականաբար եղել է հօգուտ հանքարդյունահանող ըկերությունների:

Հանքերի շահագործումը ՀՀ-ում բավական աղետալի կերպով է կազմակերպված ու դա հանգեցնում է շրջակա միջավայրի աղտոտմանն ու բնակիչների՝ վաղ տարիքում զանազան առողջական խնդիրներ ունենալուն: Հանքերի շահագործման արդյունքում

անտառահատման քանակը նկատելիորեն աճել է, իսկ վարելահողերի տարածքը՝ կրճատվել: Պոչամբարների՝ ծանր մետաղական նյութերով աղտոտված ջրերը բավական հաճախ հոսում են դեպի գետեր, լճեր ու ներծծվում հողի մեջ, որն էլ, ինչպես գիտենք հանգեցնում է ստորգետնյա/արտեզյան ջրերի թունավորմանը: Եվ վերջապես, քանի որ ՀՀ-ում գետեր կան, որոնք հոսում են երկրի սահմաններին մոտ/երկայնքով, վտանգում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև հարևան երկրների՝ հատկապես Վրաստանի ու Ադրբեջանի քաղաքացիների առողջությունը: ԵՄ-ը 2014-2017 թթ.-ին ՀՀ-ին 140-170 մլն դոլարի ֆինանսական աջակցություն է առաջարկել: Այն հանգամանքը, որ Հայաստանի սահմանները երկու կողմից՝ Ադրբեջանից և Թուրքիայից, փակ են, սահմանափակում են Հայաստանում տնտեսական գործունեության ծավալները և կախվածությունն առաջացնում արտաքին աջակցությունից: Եվրամիության և այլ արտաքին կարծիքների ու խորհուրդների արդյունքում հանձն են առնվել հակակոռուպցիոն քայլեր: Չնայած կարծես թե այն խորհրդանշական բնույթ է կրել, որը և հնարավորություն է տվել շարունակել ստանալ արտաքին աջակցություն: Այժմ հակակոռուպցիոն աշխատանքներ են տարվում խնդիրը խորհրդանշական կարգավիճակից շոշափելի արդյունքների հասցնելու համար: ՀՀ տնտեսությունը կախված է հիմնականում հանքարդյունաբերությունից, քանի որ այն աշխատատեղերի ապահովման հիմնական ոլորտն է, ու նաև դրա շնորհիվ է, որ կրճատվում է աշխատանքի նպատակով արտերկիր մեկնողների քանակը: Սակայն դա չի նշանակում, որ այն իրավունք ունենք զոհաբերել բնությունը հանուն ժամանակավոր կարիքները հոգալուն: Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանում է նաև կոռուպցիայի խորհրդանիշներից մեկը: Վերջինս արմատական բարեփոխումների կարիք ունի, որը, իր հերթին, պահանջում է կառավարության դիրքորոշման հստակությունն այնպես, որը կլինի ի շահ շրջակա միջավայրի պահպանման:

ԳԼՈՒԽ 4

Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակագրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ

պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մոդերն:

Վերջին 50 տարիների ընթացքում կիսասանապատային և տափաստանային տարածքների ակտիվ յուրացման հետևանքով իրենց բնադրավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, մեծ փոքր և գեղանի արոսները, սևափոր դռուները, կանաչ մեղվակերը: Տեղի է ունեցել ջրածահճային էկոհամակարգերի ոչնչացում: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով մերկացել են առափնյա ժայռերն ու մերձափնյա հատվածը, չորացել շրջակա ճահճուտները, վերացել են Սևանի իշխանի ձվադրավայրերի հիմնական մասը, բազմաթիվ ջրլող ու չվող թռչունների, կաթնասունների տեսակները: Սևանա և Արփի (անցյալում՝ Նան Գիլի) լճերն անփոխարինելի դեր ունեն ոչ միայն հանրապետության ճահճային թռչունների պահպանության, այլև հարևան երկրների ջրային ավազանների հետ օրգանական կապի պահպանման առումով, որով ապահովվում է հանրապետության տարածքում 145 տեսակ ջրլող և առափնյա թռչնատեսակների գոյությունը:

Անտառների հատում

Թեղուտի հատած անտառները

Անտառների անվանում	հատումների	պատճառով
շատ <u>կաթնասուններ</u> (օրինակ՝ <u>կգաքիսը</u> , <u>հնդկական</u>		<u>մացառախոզը</u> , <u>գորշ արջը</u> , <u>մուֆլոնը</u> , <u>անտառային կատուն</u> և այլն) լքել են իրենց բնական կենսավայրերը:

Հայաստանում անտառները պետական սեփականություն են, և պետությունն է ապահովում անտառների պահպանությունը, օգտագործումը, վերականգնումն ու նոր անտառային տարածքների ստեղծումը: Օրենքով անտառահատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և ինսամբի նպատակներով:

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը: Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավատեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով:

Արդյունաբերական բնօգտագործում [խմբագրել | խմբագրել կոդը]

Փայտամշակում

Հայաստանում մեծ մասշտաբների է հասել նաև արդյունաբերական բնօգտագործումը: 1920-ականների 2 տասնյակ փոքր ու միջին ձեռնարկությունների փոխարեն ներկայումս ավելի քան 200 բնակավայրում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տեղադրված են մինչև 2000-2100 մ բարձրության լանդշաֆտային տարածքներում: Բնական պաշարների օգտագործումն ու դրանից ստացվող համախառն արտադրանքն աճել են հարյուրապատիկ՝ հիմնականում էքստենսիվ զարգացման ու բնական պաշարների անխնայ շահագործման հաշվին, իսկ էկոլոգիական խնդիրները չեն կարևորվել: Հետևանքը եղել է այն, որ օտարվել են նոր հողատարածքներ, դեգրադացվել բնական լանդշաֆտներ, աղտոտվել են հողերը, օդային և ջրային ավազանները:

1987 թվականին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները մթնոլորտ են արտանետել ամնվազն 245 հզ. տ շուրջ 50 տեսակի վնասակար նյութեր, որոնցից պինդ մասնիկներ՝ 54, 4 հզ. տ, գազային ու հեղուկ մասնիկներ՝ 190, 6 հզ. տ: Գազային արտանետումներում մեծ տոկոս են կազմել ծծմբի երկօքսիդը (58%), ազոտի օքսիդները (15%) և ածխածնի մոնօքսիդը (14%):

Ներկայումս (2006) արդյունաբերական ձեռնարկությունները գործում են իրենց հզորությունների 10-30%-ի չափով, որի հետևանքով մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը կտրուկ նվազել է և կազմում է տարեկան 15-20 հզ. տ:

Լեռնահանքային արդյունաբերություն

Չգալի բացասական ազդեցություն է գործում լեռնահանքային արդյունաբերությունը. այդ նպատակով տրամադրված հողերի ընդհանուր տարածքը կազմում է 9, 7 հզ. հա, խախտված

հողերինը՝ 8, 275 հզ. հա, թափոնապահեստներին հատկացված հողերինը՝ 1, 425 հզ. հա.: Այս ճյուղի բացասական ազդեցությունը լանդշաֆտի և կենսաբազմազանության վրա դրսևորվում է հիմնականում.

- դատարկ ապարի ու թափոնների կուտակումով և շրջապատում տարածումով,
- բաց հանքերի շահագործման հետևանքով բնական լանդշաֆտների ու էկոհամակարգերի խախտումով, որը հանգեցնում է լանդշաֆտի դեգրադացման,
- ստորգետնյա ջրերի ջրաբանական ռեժիմի, ֆիզիկական և քիմիական բաղադրությունների փոփոխություններով:

Ներկայումս շահագործվող ավելի քան 130 խոշոր ու միջին հզորության հանքերի գերակշիռ մասը բաց է: Կուտակված արդյունաբերական թափոնների ծավալը կազմում է մի քանի հարյուր միլիոն մ³:

Օդային ու ջրային ավազաններ

Գոշ լիճ, Դիլիջան

Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ (օրինակ՝ Դեբեդ և Ողջի գետերի), որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից: Իրենց բացասական ազդեցությամբ այժի են ընկնում արդյունաբերության հատկապես մետաղաձուլական և քիմիական ճյուղերը: Չնայած վերջին շրջանում դրանց ծավալները զգալիորեն նվազել են, սակայն երկրի լանդշաֆտներին ու կենսաբազմազանությանը հասցրած վնասը զգալի է:

Գունավոր մետաղաձուլություն

Հանրապետության գունավոր մետաղաձուլության արտադրական թափոնների ծավալը ջրային ավազաններում հասնում է մինչև 200 միլիոն մ³, իսկ թունավոր թափոնները 1980-ականների վերջին կազմել են շուրջ 18 հզ. տ. Դրանց պարունակությունը, մասնավորապես Ալավերդու տեխնածին գոտում, սահմանային թուլյատրեյի կոնցենտրացիան գերազանցել է շուրջ 20-40 անգամ: Իսկ «Նաիրիտ» ԳԱՄ-ի ուժեղ աղտոտման գոտում բուլսերի տերուների վրա նկատվել են քլորոզ, մեռուկացում, աճի և զարգացման դանդաղում, ծաղկավիժում և այլն: Ֆտորը, որն արտանետվում է այլումինի գործարաններից, հատկապես ազդում է ծիրանենու վրա. պտուղները չեն հասունանում, պնդանում են, չորանում ու դառնահամանում են:

Ցեմենտի արտադրություն

Կենսաբազմազանության վրա զգալի բացասական ազդեցություն է թողնում ցեմենտի արտադրությունը: Հրազդան և Արարատ քաղաքներն ու դրանց մերձակա տարածքները չափազանց աղտոտված են ցեմենտի փոշով, որն ազդում է հատկապես ագրոկենսաբազմազանության ու անտառային կենսահամակարգի վրա:

Բնական լանդշաֆտների վրա գնալով աճում է նաև ծավալվող շինարարության բացասական ազդեցությունը:

Տրանսպորտ

Գնալով ավելանում է տրանսպորտի վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա. ավելի քան 850 կմ երկաթուղային ու 13 հզ. ավտոմոբիլային ճանապարհներին ամբողջովին ոչնչացվել են բնական կենսահամակարգերը: Ճանապարհային շինարարությունն այսօր սպառնում է նաև հատուկ պահպանվող տարածքներին (Շիկահողի արգելոց և այլն): Մյուս կողմից՝ ճանապարհներին մերձակա սանիտարական գոտում կենսաբազմազանությունն աճում է, կատարվում են ծառատնկումներ ու կանաչապատումներ:

Անհամեմատ աճել են ավտոմեքենաների զազային արտանետումները (164, 4 հզ. տ. 2004 թվականին)՝ ագոտի օքսիդները (12, 82 հզ. տ), ածխածնի մոնօքսիդը (119, 8 հզ. տ), ցնդող օրգանական միացությունները (30, 97 հզ. տ), մուրը (0, 46 հզ. տ), ծծմբի երկօքսիդը (0, 36 հզ. տ) և այլն: Վերջին 6 տարում ավտոտրանսպորտից արտանետումների ծավալն աճել է 17%-ով:

Էներգետիկա

Բնական միջավայրի վրա ազդող հզոր գործոն է էներգետիկան, որի արդյունաբերական արտանետումներում մեծ է ջեկերի բաժինը:

ՅԱԷԿ-ը հատկապես վտանգավոր է շահագործման տեխնոլոգիական ռեժիմի հնարավոր շեղումների առումով և թափոնների առավել վտանգավորությամբ (վերջիններս կուտակվում ու պահպանվում են տեղում՝ հատուկ ռեժիմով): Անցյալի Էներգետիկական խնդիրներով պայմանավորված՝ 1950-ականներին 19 մ-ով իջեցվել է Սևանա լճի մակարդակը, որի հետևանքով խախտվել է լճի Էկոհամակարգի բնական հավասարակշռությունը:

Զբոսաշրջություն

Բնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև անկազմակերպ զբոսաշրջությունը, բուսական պաշարների (դեղաբույսեր, սնկեր և այլն) չկարգավորված հավաքն ու օգտագործումը, որոնց հետևանքով զանգվածաբար ոչնչանում են բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, շրջակա միջավայրն աղտոտվում է կենցաղային աղբով և այլն: Այս խնդիրների լուծման ամենաարդյունավետ եղանակներից մեկը բնակչության Էկոլոգիական կրթության ու դաստիարակության բարելավումն է, մարդկանց մեջ բնական միջավայրի հանդեպ հոգածու վերաբերմունքի մշակումը:

Քիմիական արդյունաբերություն

Ավավերդու պղնձամոլիբդենային կոմբինատ

Յայաստանում և հատկապես Երևանում խորհրդային տարիներին քիմիական արդյունաբերության գերկենտրոնացման և դրա վտանգավոր հետևանքների դեմ համաժողովրդական պայքարի այլ բարձրացավ 1980-ականների վերջին: Այդ այլքի ճնշման տակ փակվեցին հանրապետության քիմիական արդյունաբերության հսկա «Նաիրիտ» ԳԱՄ-ը (1990), ՅԱԷԿ-ը (1991) և այլ ձեռնարկություններ:

Չնայած հետագայում հարկ եղավ դրանք վերաբացել, բայց նաև հաջողվեց հանրապետությունում առաջին պլան միջև բնապահպանական խնդիրները և խթանել բնապահպանական կազմակերպությունների ստեղծումը:

Բնության պետական պահպանություն

Յայաստանում բնօգտագործման և բնապահպանական հարցերը կարգավորում է պետությունը. ՀՀ ԱԺ-ը, իր ընդունած օրենքներից բացի, վավերացնելով համապատասխան միջազգային համաձայնագրեր, միանում է դրանց և պատասխանատվություն ստանձնում երկրում այդ համաձայնագրերի պահանջների իրականացման համար:

Երկրում բնապահպանական խնդիրները լուծելու, կենսաբազմազանության պահպանության ու կենսապաշարների խելամիտ օգտագործման նպատակով մշակվում է նաև ՀՀ կենսաբազմազանության պահպանության ռազմավարությունը: Այն խիստ բազմակողմանի ու ծավալուն փաստաթուղթ է, որը ներառում է ինչպես բնաշխարհի վրա մարդահարույց վնասակար գործոնների նվազեցման, Էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների ներդրման, Էկոլոգիական կրթության ու գիտության զարգացման, հատուկ պահպանվող տարածքների ցանցի ընդլայնման, այնպես էլ այդ ոլորտի օրենսդրական դաշտի հետագա ամբողջացման ու կատարելագործման հարցեր:

Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքի շրջանակում, մարդիկ և մարդկային հասարակություններն իրավունք ունեն օգտվել բնապահպանական տեսակետից հավասարակշիռ և տնտեսական, մշակութային, սոցիալական ու իրավական զարգացման համար նպաստավոր շրջակա միջավայրից և պետությունները չպետք է անբարենպաստ փոփոխություններ առաջացնեն ապրելու պայմաններում, այնպես որ վտանգվեն շրջակա միջավայրն ու մարդկանց առողջությունը: Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը չորս մասերից է բաղկացած: Առաջինը՝ բնապահպանական որոշումներում քաղաքացիների մասնակցության իրավունքն է, երկրորդը՝ բնապահպանական տեղեկություններին հասանելիության իրավունքը, երրորդը՝ բնապահպանական թեմայով ուսուցումների իրավունքը, իսկ վերջինը զարգացման իրավունքը:

Իհարկե միմյանց հետ սերտ առնչություն ունեցող առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը և զարգացման իրավունքը պայմանավորված են կայուն զարգացմամբ: Կայուն զարգացումը մարդկային արժանապատվության

դրսևորումներից է, որը ժամանակակից սերնդի մարդու իրավունքների լրացուցիչն է, իսկ գալիք սերունդների իրավունքների իրագործման նախապայմանը: Կայուն զարգացումը գործընթաց է, որ ցանկալի ապագա է ուրվագծում մարդկային հասարակությունների համար, որտեղ կյանքի պայմաններն այնպիսին են, որ օգտվելով բնապաշարներից, առանց վնասելու կենսական համակարգերի կայունությունը, միատարրությունն ու գեղեցկությունը, ապահովվում են մարդու կարիքները:

Կայուն զարգացումը գործեղանակներ է ներկայացնում զարգացման ոչ միայն կառուցվածքային, սոցիալական ու տնտեսական ձևաչափերի համար, որպեսզի հնարավոր լինի կանխել կենսական համակարգերի և բնապաշարների ոչնչացումը, կլիմայական փոփոխությունները, աղտոտվածությունը, բնակչության աճը, անարդարությունը և ներկա ու ապագա սերունդների կենսապայմանների անկումը:

Կայուն զարգացումը գործընթաց է, որտեղ ռեսուրսների օգտագործումը, ներդրումները, տեխնոլոգիական զարգացման ուղղվածությունը և կառուցվածքային փոփոխությունները համապատասխանում են ներկայի և ապագայի կարիքներին: 90-ականներից ուշադրության կենտրոնում գտնվող կայուն զարգացումն այն կետն է որտեղ միանում են մարդու իրավունքները, շրջակա միջավայրը և տնտեսական ու սոցիալական զարգացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ե

Տնտեսական զարգացումը կայուն չլինելու և բնապահպանական կողմերը չհարգելու դեպքում, ոչ միայն զարգացման չի հանգեցնելու, այլև մեծ ծախսեր է պատճառելու պետություններին: Այդ ծախսերը չնչին են թվում մարդկանց կյանքին սպառնացող առողջապահական խնդիրների համեմատությամբ: Օրինակ նախկին Խորհրդային միությունը գյուղատնտեսության զարգացման և բամբակի դաշտերը ոռոգելու համար Արալյան լիճը սնուցող գետերի վրա բազում ամբարտակներ կառուցելով, այդ լճի ցամաքելու պատճառ դարձավ և այդպիսով տեղի ունեցավ Չերնոբիլի աղետից հետո ժամանակի երկրորդ կենսաբանական խոշոր աղետը: Բնահպանական այդ աղետը վտանգեց տարածաշրջանի ժողովրդի առողջությունն ու կյանքը և հազարավոր մարդիկ մահացան լճի ցամաքելու հետևանքով առաջացած աղի փոթորիկների պատճառով: Այդպիսով մարդիկ զրկվեցին առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքից: Ուստի կարելի է ասել, որ ամուր կապ գոյություն ունի կայուն զարգացման և մարդու իրավունքների հարգման միջև և ոչ-կայուն զարգացումը կարող է մարդու իրավունքների բացահայտ խախտման հանգեցնել:

Ուստի առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը պայմանավորված է կայուն զարգացմամբ: Այդ իսկ պատճառով, տնտեսական զարգացման ծրագրերում պետք է այնպիսի քաղաքականություններ որդեգրել, որոնք հիմնված են մարդու իրավունքների հարգման և շրջակա միջավայրի պահպանության վրա: Այդ թեման ընդգծվել է նաև 1992 թ. կայացած Ռիոյի համագումարում: Այդ հայտարարության մեջ ասված է. «Չարգացումը պետք է այնպես լինի, որ ապահովվեն ներկա և գալիք սերունդների շրջակա միջավայրի զարգացման հետ առնչվող կարիքները:»

2002թ. Յոհաննեսբուրգի գազաթնամոլորակի հայտարարությունը ևս ամրապնդեց կայուն զարգացման համաշխարհային ծրագիրը և միջազգային բեմում այդ հասկացության դիրքը: Յոհաննեսբուրգի հայտարարության մեջ ասված է. «Տնտեսական և սոցիալական զարգացումը և բնապահպանությունը կայուն զարգացման երեք հիմքերն են հանդիսանում»: Այդ հարցն ընդգծվեց նաև արդարադատության միջազգային դատարանի օրենքներում, որոնց մեջ նշված

Է.«Կայուն զարգացումը պետք է կապ ստեղծի տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության միջև:»

Իհարկե այդ կապակցությամբ գոյություն ունեցող բոլոր համաձայնագրերն ու պայմանագրերը նպաստավոր են, սակայն պետք է իմանալ, որ շրջակա միջավայրի հետ կապված օրենքները գործնական են այն ժամանակ, երբ անառողջ ու վտանգավոր գործունեություն տեղի չունենա, չաղտոտվեն օդն ու ջուրը և թափոններ չլցվեն լեռներում, ծովերում ու օվկիանոսներում և համագործակցություն ծավալվի ժողովուրդների ու պետությունների միջև

Սևանա լիճ՝ հայկական մարգարիտը

Սևանը հայկական բնաշխարհի գլխավոր մարգարիտն է և ժողովրդի ազգային հպարտությունը: Սևանա լիճը ամենամեծ քաղցրահամ լիճն է ԱՊՀ երկրների տարածքում: Գեղեցիկ լիճը շրջապատված է լեռնաշղթաներով և խիտ լեռնային անտառներով, ինչը ստեղծում է անհավատալի գեղատեսիլ տեսարան: Դեպի լիճ հոսում են 28 գետեր, իսկ դուրս է գալիս միայն մեկը՝ Հրազդան գետը:



Եղանակը Սևանում

Ամառային տապի օրերին Սևանը տեղի բնակչության համար իսկական փրկություն է: Սևանում եղանակը ցուրտ է. Լիճն այնքան բարձր է, որ տաք ամառային օրերին ջրի ջերմաստիճանը հասնում է 18-20C:

Լիճը կարող է մարդկանց փրկել ինչպես շոգից, այնպես էլ քաղցից: Ժամանակին Սևանը շատ հարուստ էր ձկներով և բավարարում էր բնակչության կարիքները, բայց ժամանակի ընթացքում որսագողության և արդյունաբերության զարգացման հետևանքով լճի ձկնային պաշարները սկսեցին պակասել, ավելին՝ իրավիճակն այնպես վատացավ, որ հայկական իշխանն արդեն նշված է Կարմիր գրքում:

Սևանի խեցգետինը, որը մեծ քանակությամբ արտահանվում է Հայաստանից, շատ հայտնի և սիրված է ԱՊՀ երկրներում: Սևանա լճի ամբողջ ափով կան բազմաթիվ ռեստորաններ և սրճարաններ, որտեղ դուք կգտնեք սիգի ապուր, իշխանի քյաբաբներ, խեցգետին և իհարկե, բազմաթիվ այլ հայկական ավանդական ազգային ուտեստներ:

Սևան անունը. Գեղամա ծով

Լիճը միշտ չէ, որ կոչվում էր Սևան, ինչը նշանակում է Սև վանք՝ ի պատիվ Սևանավանք հինավուրց վանքի, որը գտնվում է թերակղզում: Նախկինում Սևանը կոչվում էր Գեղամա ծով՝ լճի շրջակայքում գտնվող Գեղամա լեռնաշխարհի պատվին:



Սևան անունը. Գեղամա ծով

Լիճը միշտ չէ, որ կոչվում էր Սևան, ինչը նշանակում է Սև վանք՝ ի պատիվ Սևանավանք հինավուրց վանքի, որը գտնվում է թերակղզում: Նախկինում Սևանը կոչվում էր Գեղամա ծով՝ լճի շրջակայքում գտնվող Գեղամա լեռնաշխարհի պատվին:

Սևան անունը. Գեղամա ծով

Լիճը միշտ չէ, որ կոչվում էր Սևան, ինչը նշանակում է Սև վանք՝ ի պատիվ Սևանավանք հինավուրց վանքի, որը գտնվում է թերակղզում: Նախկինում Սևանը կոչվում էր Գեղամա ծով՝ լճի շրջակայքում գտնվող Գեղամա լեռնաշխարհի պատվին:

Սևան անունը. Գեղամա ծով

Լիճը միշտ չէ, որ կոչվում էր Սևան, ինչը նշանակում է Սև վանք՝ ի պատիվ Սևանավանք հինավուրց վանքի, որը գտնվում է թերակղզում: Նախկինում Սևանը կոչվում էր Գեղամա ծով՝ լճի շրջակայքում գտնվող Գեղամա լեռնաշխարհի պատվին:



Սևան անունը. Գեղամա ծով

Լինճը միշտ չէ, որ կոչվում էր Սևան, ինչը նշանակում է Սև վանք՝ ի պատիվ Սևանավանք հինավուրց վանքի, որը գտնվում է թերակղզում: Նախկինում Սևանը կոչվում էր Գեղամա ծով՝ լճի շրջակայքում գտնվող Գեղամա լեռնաշխարհի պատվի

Որտե՞ղ է գտնվում Սևանը

Երևանից մինչև Սևան հեռավորությունը ընդամենը 57 կմ է: Մեքենայով կարող եք Սևան հասնել 1,5 ժամվա ընթացքում:



Հանգիստը Սևանում

Ինչպես վերը նշվեց, Սևանում սևնդի հետ կապված ոչ մի խնդիր չէք ունենա. Ամեն ինչ համեղ է և բնական: Սևանում հանգիստը վայելելու համար կան բոլոր պայմանները: Ափամերձ տարածքում կան բազմաթիվ տնակներ, հյուրանոցներ, հանգստյան տներ և տարբեր մակարդակի հարմարավետության մոթելներ: Դուք հաստատ կարող եք գտնել ձեզ համար լավագույն տարբերակը լավագույն գներով:

Էքստրեմալ տուրիզմ. Ի՞նչ անել Սևանում

Սևանում կարող եք հանգստանալ ինչպես պասիվ կերպով՝ ամբողջ ընտանիքի կամ ընկերների հետ, այնպես էլ ակտիվ: Սևանում զարգանում է ուլիստերֆիսզը կամ հողմասահքը, նաև կարող եք առագաստանավով լողալ լճի վրայով: Եթե որոշեք մնալ Սևանում, կարող եք փորձել Պարագլայդինգը՝ լճի շրջակայքում գտնվող լեռներից: Դուք կգտնեք ջրային տարատեսակ գործողություններ, կատամարաններ, շարժիչային նավակներ և այլն:

Սևանում դուք հաստատ չէք ձանձրանա:



Սևանա լիճ

*«Սևանը նման է մի կտոր կապույտ երկնքի,
որ իջել է երկնքից երկրի վրա լեռների միջև»:*

Մաքսիմ Գորկի

Սևանա լիճը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, մայրաքաղաք Երևանից 60 կմ դեպի հյուսիս-արևելք: Վանա և Ուրմիա լճերի հետ միասին Սևանա լիճը հանդիսանում է հայկական հինավուրց աշխարհի պատմական Մեծ Հայք կոչվող թագավորության երեք խոշոր լճերից մեկը: Վանա և Սևանա լճերը միասին կոչվել են Հայկական թագավորության «կապույտ աչքեր»:
Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մ բարձրության վրա: Սևանա լիճը շրջապատված է Վարդենիսի, Գեղամա, Փամբակի, Արեգունի և

Սևանի լեռնաշղթաներով: Նորատուս և Արտանիշ հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատկերով՝ Շորժայի թմբով, լիճը բաժանված է Մեծ Սևանի և Փոքր Սևանի: Լճի հյուսիս-արևմտյան մասում գտնվում է Սևանի թերակղզին իր հռչակավոր վանքերով ու խաչքարերով:

Սևանը Հայաստանի Հանրապետության միակ լիճն է, որը դասվում է խոշոր լճերի շարքին: Այն աշխարհի մեծ, բարձր-լեռնային, քաղցրահամ լճերից է: Այս երեք հատկանիշների միասնության պատճառով լիճը իսկապես հանդիսանում է տարածաշրջանի և մեր մոլորակի եզակի, ուշագրավ երևույթներից: Սևանա լիճը լեռների միջև տեղակայված մի մարգարիտ է, որը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի յուրահատուկ ու ամենատպավորիչ գանձը:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրների շարքում բացառիկ կարևոր նշանակություն ունի Սևանա լճի պահպանության ու ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: Սևանա լիճը իր ջրահավաք ավազանով ինքնատիպ բազմազանություն է: Անուշահամ ջրի անփոխարինելի ավազան է: Սևանը կապված է Արպա և Որոտան գետերի ավազանին: Սևանա լճի հիմնախնդիրն ունի երկակի բնույթ՝ էկոլոգիական և տնտեսական: Բնական միջավայրը բուժելու համար պահանջվում են տնտեսական ծախսեր: Ներկայումս կրիտիկական վիճակում են հասել ջրային և ձկնային պաշարները, ամբողջ համակարգերի բնական ճահճակալումը: Ջրաբերակների ավելացման հետ մեկտեղ ավելացավ աբիոտիկ և բիոտիկ նյութերի քանակը, հետևապես լճի աղտոտումն ու ու թունավորումը: Լճում լայն տարածում են ստացել կապտականաչ ջրիմուռները, և մանրէները: Մշակվեց պետականորեն նոր սխեմա՝ դադարեցնել լճի ջրերի դարավոր պաշարների բաց թողումը և լիճը պահպանել բնականին մոտ վիճակում:

Պետք է պայթարի հիմքում տրվի բնապահպանության նոր զարգացման ռազմավարություն: Սևանա լճի առողջացման և ամբողջ էկոհամակարգի պահպանման ու բարելավման գործը

պետք է կատարվի համազգային ջանքերով կառավարվի պետական մակարդակով:

Սևանի պահպանությունը և բարվոք վիճակում գալիք սերունդներին փոխանցելը համազգային խանդիր է և պետք է լուծվի ազգովի, պետական մակարդակով: Այդ նպատակների իրագործման առանցքում կանգնած է հայ դպրոցը՝ իր կրթադաստիարակչական աշխատանքներով, որոնք պետք է իրագործվեն արտադպրոցական, արտադասարանական, Նախագծային ուսուցման կա հետևողական, համակարգված աշխատանքների շնորհիվ:-

Գրականության ցանկ

1. Ա. Գասպարյան, Ռ. Մկրտչյան, Լ. Վալեսյան,

Բնօգտագործում և բնապահպանություն:

2. Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան,

Աշխարհագրություն 9

3. Վիքիպեդիա:

Ազատ հանրագիտարան

4. Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից
[Jump to navigation](#)[Jump to search](#)